# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-9/22-5

ք. Երևան 12 -ը փետրվարի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Մ. Ղամբարյանի,** ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Ա. Մեժլումյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***13,815,780 (տասներեք միլիոն ութ հարյուր տասնհինգ հազար յոթ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում

է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[16] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[16] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **«ՎԻՈԼԱ» ՍՊԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | **ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3** |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | **«Ամերիա բանկ» ՓԲԸ** |
| Հ/Հ 900011144129 | **Հ/Հ 1570001092880100** |
| ՀՎՀՀ 02522157 | **ՀՎՀՀ 00801026** |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | **տնօրեն** |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չ/հ | Գնման ենթակա ապրանքների անվանումը | Տեխնիկական հատկանիշներ | ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ | ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ |
|---|---|---|---|---|
| 5. | Գյուկոզա 400 մլ | լրակազմում 400մլ ազդանյութ, 4x100 քանակի գործարանային փաթեթավորումով, ներառված է նաև ստանդարտ | GLUCOSE REAGENT SET | Lab-Care Diagnostics Ltd Յնդկաստան |
| 6. | Ընդհանուր սպիտակուց 400մլ | լրակազմում 400մլ ազդանյութ, 4x100 քանակի գործարանային փաթեթավորումով, ներառված է նաև ստանդարտ | TOTAL PROTEIN | PZ Cormay S.A. Լեհաստան |
| 8. | Միզանյութ 2X120 մլ | լրակազմում 240մլ ազդանյութ, 2x120 քանակի գործարանային փաթեթավորումով, ներառված է նաև ստանդարտ | UREA (GLDH, UV, Kinetic) | PZ Cormay S.A. Լեհաստան |
| 9. | Միզաթթու 2x100 մլ | լրակազմում 200մլ ազդանյութ, 2x100 քանակի գործարանային փաթեթավորումով, ներառված է նաև ստանդարտ | URIC ACID | PZ Cormay S.A. Լեհաստան |
| 10. | Կրեատինին 2X120 մլ | լրակազմում 240մլ ազդանյութ, 2x120 քանակի գործարանային փաթեթավորումով | CREATININE | PZ Cormay S.A. Լեհաստան |
| 11. | Տրանսամինազա ԱUS 2X60 մլ | լրակազմում 120մլ (R1+R2) ազդանյութ, 2x60 քանակի գործարանային փաթեթավորումով, | ASAT/ GOT (IFCC) | PZ Cormay S.A. Լեհաստան |
| 12. | Տրանսամինազա ԱLS 2X60 մլ | լրակազմում 120մլ (R1+R2) ազդանյութ, 2x60 քանակի գործարանային փաթեթավորումով, | ALAT/ GPT (IFCC) | PZ Cormay S.A. Լեհաստան |
| 15. | Խոլեսթերին 2x100 մլ | լրակազմում 200մլ ազդանյութ, 2x100 քանակի գործարանային փաթեթավորումով, ներառված է նաև ստանդարտ | CHOLESTEROL | PZ Cormay S.A. Լեհաստա |
| 18. | LDL - Լիպոպրոտեիդներ (բետա) 2X60մլ | լրակազմում 120մլ ազդանյութ, 2x60 քանակի գործարանային փաթեթավորումով, ներառված է նաև ստանդարտ | CORMAY LDL DIRECT 30 | PZ Cormay S.A. Լեհաստան |
| 23. | ֆոսֆոր 2X100 մլ | լրակազմում 200մլ ազդանյութ, 2x100 քանակի գործարանային փաթեթավորումով, ներառված է նաև ստանդարտ | PHOSPHORUS | PZ Cormay S.A. Լեհաստան |
| 25. | Ստուգիչ սիճուկ նորմալ 6 x 5 մլ | լրակազմում 30մլ ազդանյութ, 6x5 քանակի գործարանային փաթեթավորումով | CORMAY SERUM HN | Lab-Care Diagnostics Ltd Յնդկաստան |
| 26. | Ստուգիչ սիճուկ պաթոլոգիական 6 x 5մլ | լրակազմում 30մլ ազդանյութ, 6x5 քանակիգործարանայինփաթեթավորումով | CORMAY SERUM PH | Lab-Care Diagnostics Ltd Յնդկաստան |
| 27. | Սիֆիլիս RPR 100 թեստ | լրակազմում 100 թեստ , ագլյուտինացիան 8 րոպե, դրական և բացասական ստուգիչների առկայություն, գործարանային փաթեթավորումով տուփ | RPR REAGENT SET | Lab-Care Diagnostics Ltd Յնդկաստան |
| 28. | Սիֆիլիս TPHA 100թեստ | լրակազմում 100 թեստ, դրական և բացասական ստուգիչների առկայություն, ներառված է նաև կաթոցիչ և լուծիչ, գործարանային փաթեթավորումով տուփ | ДС-РПГА-АНТИ-ЛЮИС | ООО ,НПО՝ Диагностическиесистемы՝ Ռուսաստանի Դաշնություն |
| 29. | Հեպատիտ B HBsAg 50թեստ | լրակազմում 50 թեստ, անալիտիկ զգայունությունը՝ նվազագույնը 1 նգ/մլ: Զգայունությունը՝ նվազագույնը 99%: Սպեցիֆիկությունը՝ նվազագույնը 99 %: Թեստիտեսակը՝ կասետային (Cassette) գործարանային փաթեթավորումով տուփ: | HEPATITIS B Ag TEST CARD | Lab-Care Diagnostics Ltd Յնդկաստան |
| 32. | Urin -10 մեզի անալիզի համար 100 թեստ | լրակազմում 100 թեստ, մեզիանալիզի համար, գործարանային փաթեթավորումով տուփ | VioLine 10 | DFI Co. Ltd Յարավային Կորեա |
| 38. | Պրոլակտին 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-Пролактин | ООО ,НПО՝ Диагностические системы՝ Ռուսաստանի Դաշնություն |
| 39. | Պրոգեստերոն 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-Стероид-Прогестерон | ООО ,НПО՝ Диагностические системы՝ Ռուսաստանի Դաշնություն |
| 40. | Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-ПСАобший | ООО ,НПО՝ Диагностические системы՝ Ռուսաստանի Դաշնություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 41. | Լյուտեինիզացնող հորմոն 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-Гонадотропин-ЛГ | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |
| 42. | Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումո տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-ГОнадотропин-ФСГ | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |
| 43. | Տեստոստերոն 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-Стероид-Тестостерон | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |
| 45. | Թիրօքսին T4 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-Тироид-Т4обший | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |
| 46. | Տրիյոդթիրոնին T3 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-Туронд-Т3обший | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |
| 47. | Թիրեոտրոպ հորմոն 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-ТИРОИД-ТТГ | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |
| 48. | Կորտիզոլ 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-Стероид-Кортизол | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |
| 51. | Հակակորիզային հակամարմիններ (Ig G,A,M) 12x8 | լրակազմում 12x8 տեստ,Կոտրվող սթրիպներ, ինկուբացիոն ժամանակը 30/30/15 րոպե, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C | ANA Screen | DiaMetraSrl Իտալիա |
| 52. | Շրջանառվող իմունոկոմպլեկսներ CIC C1Q IgG 12x8 | լրակազմում 12x8 տեստ,Կոտրվող սթրիպներ, ինկուբացիոն ժամանակը 30/30/15 րոպե, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C | CIC C1q ELISA | DiaMetraSrlԻտալիա |
| 53. | Շրջանառվող իմունոկոմպլեկսներ CIC C3D IgG 12x8 | լրակազմում 12x8 տեստ,Կոտրվող սթրիպներ, ինկուբացիոն ժամանակը 30/30/15 րոպե, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C | CIC C3d ELISA | DiaMetraSrl Իտալիա |
| 54. | ՎԻՉ-ինֆեկցիա HIV 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-АНТИ-ВИЧ-УНИФ | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |
| 56. | Տոքսոպլազմա IgM 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-анти-ТОКСО-М (capture) | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |
| 57. | Տոքսոպլազմա IgG 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտայի նհետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-АНТИ-ТОКСО-G | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |
| 58. | Հերպես IgM 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-АНТИ-ВПГ -1,2-М | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |
| 59. | Հերպես IgG 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-АНТИ-ВПГ -2-G | ООО ,НПО՛ Диагностические системы՛ Ռուսաստանի Դաշնություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 60. | Ցիտոմեգալովիրուս IgM 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-АНТИ-ЦМВ-М | ООО ,НПО Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն |
| 61. | Ցիտոմեգալովիրուս IgG 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտայինհետազոտությանհամար, ներառվածենստանդարտներ և ստուգիչներ, գործարանայինփաթեթավորումովտուփ, պահպանմանջերմայինռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-АНТИ-ЦМВ-G | ООО ,НПО Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն |
| 62. | Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgM 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտայինհետազոտությանհամար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-АНТИ-ВЭБ-VCA-M | ООО ,НПО Диагностические с истемы' Ռուսաստանի Դաշնություն |
| 63. | Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgG 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-АНТИ-ВЭБ-VCA-G | ООО ,НПО Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն |
| 64. | Խլամիդիա IgA 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-АНТИ-ХЛАМИДИЯ TR-A | ООО ,НПО Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն |
| 65. | Խլամիդիա IgG 12X8 | լրակազմում 12x8 տեստ, իմունոֆերմենտային հետազոտության համար, ներառված են ստանդարտներ և ստուգիչներ, գործարանային փաթեթավորումով տուփ, պահպանման ջերմային ռեժիմը՝ 2-8 C: | ДС-ИФА-АНТИ-ХЛАМИДИЯ TR-G | ООО ,НПО Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն |
| 67. | APA IgG,IgM screen ELISA 96 տեստ | Լրակազմում 12x8 տեստ,Կոտրվող սթրիպներ, ինկուբացիոն ժամանակը 30/15/15 րոպե, իմունոֆերմենտային հետազոտության համար, 2-8 C պահպանում, ստերիլ գործարանային փաթեթավորումով | Anti Phospholipid Screen | DiaMetraSrl Իտալիա |
| 68. | ACA screen ELISA 96 տեստ | Լրակազմում 12x8 տեստ,Կոտրվողսթրիպներ, ինկուբացիոնժամանակը 30/15/15 րոպե, իմունոֆերմենտային հետազոտության համար, 2-8 C պահպանում, ստերիլ գործարանային փաթեթավորումով | Anti Cardiolipin Screen | DiaMetraSrl Իտալիա |

***Ապրանքները պետք է ունենան.***

1. Եվրամիության և /կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և /կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):
2. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ):
3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:
4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:
5.Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

***թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ**

6. Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բազա:

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **«ՎԻՈԼԱ» ՍՊԸ** |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | **տնօրեն** |
| **Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ** | **Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ** |

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման ենթակա ապրանքների անվանումը | Չ/մ | Քանակը | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 5. | Գլյուկոզա 400 մլ | լրակազմ | 20 | 5,040 | 100,800 |
| 6. | Ընդհանուր սպիտակուց 400մլ | լրակազմ | 20 | 4,200 | 84,000 |
| 8. | Միզանյութ 2X120 մլ | լրակազմ | 35 | 6,360 | 222,600 |
| 9. | Միզաթթու 2x100 մլ | լրակազմ | 15 | 6,000 | 90,000 |
| 10. | Կրեատինին 2X120 մլ | լրակազմ | 30 | 3,240 | 97,200 |
| 11. | Տրանսամինազա ԱUS 2X60 մլ | լրակազմ | 30 | 4,440 | 133,200 |
| 12. | Տրանսամինազա ԱLS 2X60 մլ | լրակազմ | 30 | 4,440 | 133,200 |
| 15. | Խոլեսթերին 2x100 մլ | լրակազմ | 20 | 5,400 | 108,000 |
| 18. | LDL - Լիպոպրոտեիդներ (բետա) 2X60մլ | լրակազմ | 12 | 47,040 | 564,480 |
| 23. | ֆոսֆոր 2X100 մլ | լրակազմ | 10 | 6,600 | 66,000 |
| 25. | Ստուգիչ սիճուկ նորմալ 6 x 5 մլ | լրակազմ | 5 | 28,200 | 141,000 |
| 26. | Ստուգիչ սիճուկ պաթոլոգիական 6 x 5մլ | լրակազմ | 5 | 28,200 | 141,000 |
| 27. | Սիֆիլիս RPR 100 թեսթ | լրակազմ | 80 | 5,880 | 470,400 |
| 28. | Սիֆիլիս TPHA 100թեսթ | լրակազմ | 20 | 18,600 | 372,000 |
| 29. | Հեպատիտ B HBsAg 50թեսթ | լրակազմ | 120 | 10,560 | 1,267,200 |
| 32. | Urin -10 մեզի անալիզի համար 100 թեսթ | լրակազմ | 150 | 4,560 | 684,000 |
| 38. | Պրոլակտին 12X8 | լրակազմ | 10 | 28,560 | 285,600 |
| 39. | Պրոգեստերոն 12X8 | լրակազմ | 8 | 28,560 | 228,480 |
| 40. | Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն 12X8 | լրակազմ | 10 | 22,860 | 228,600 |
| 41. | Լյուտեինիզացնող հորմոն 12X8 | լրակազմ | 8 | 27,360 | 218,880 |
| 42. | Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն 12X8 | լրակազմ | 10 | 27,360 | 273,600 |
| 43. | Տեստոստերոն 12X8 | լրակազմ | 10 | 29,820 | 298,200 |
| 45. | Թիրօքսին T4 12X8 | լրակազմ | 25 | 19,920 | 498,000 |
| 46. | Տրիյոդթիրոնին T3 12X8 | լրակազմ | 25 | 19,800 | 495,000 |
| 47. | Թիեոտրոպ հորմոն 12X8 | լրակազմ | 35 | 19,800 | 693,000 |
| 48. | Կորտիզոլ 12X8 | լրակազմ | 9 | 21,000 | 189,000 |
| 51. | Հակակորիզային հակամարմիններ (Ig G,A,M) 12x8 | լրակազմ | 5 | 95,400 | 477,000 |
| 52. | Շրջանառվող իմունոկոմպլեկսներ CIC C1Q IgG 12x8 | լրակազմ | 2 | 119,280 | 238,560 |
| 53. | Շրջանառվող իմունոկոմպլեկսներ CIC C3D IgG 12x8 | լրակազմ | 3 | 119,280 | 357,840 |
| 54. | ՎԻՉ-ինֆեկցիա HIV 12X8 | լրակազմ | 25 | 20,940 | 523,500 |
| 56. | Տոքսոպլազմա IgM 12X8 | լրակազմ | 12 | 25,860 | 310,320 |
| 57. | Տոքսոպլազմա IgG 12X8 | լրակազմ | 12 | 24,600 | 295,200 |
| 58. | Հերպես IgM 12X8 | լրակազմ | 20 | 27,900 | 558,000 |
| 59. | Հերպես IgG 12X8 | լրակազմ | 12 | 24,600 | 295,200 |
| 60. | Ցիտոմեգալովիրուս IgM 12X8 | լրակազմ | 12 | 25,860 | 310,320 |
| 61. | Ցիտոմեգալովիրուս IgG 12X8 | լրակազմ | 12 | 24,600 | 295,200 |
| 62. | Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgM 12X8 | լրակազմ | 20 | 34,560 | 691,200 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 63. | Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgG 12X8 | լրակազմ | 12 | 34,560 | 414,720 |
| 64. | Խլամիդիա IgA 12X8 | լրակազմ | 12 | 25,800 | 309,600 |
| 65. | Խլամիդիա IgG 12X8 | լրակազմ | 12 | 25,800 | 309,600 |
| 67. | APA IgG,IgM screen ELISA 96 տեստ | լրակազմ | 2 | 89,160 | 178,320 |
| 68. | ACA screen ELISA 96 տեստ | լրակազմ | 2 | 83,880 | 167,760 |
| **Ընդամենը** | | | | | **13,815,780** |

***Գնման ժամանակացույցը*** *կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում՝ պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

**Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«ՎԻՈԼԱ» ՍՊԸ**
**տնօրեն**

**Մ. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ**

*Հավելված N 2*
*N ԳՀԱՊՁԲ-20-9/22-5 պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 5. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Գլյուկոզա 400 մլ/ | 33691423/581 | 100,800 |
| 6. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ընդհանուր սպիտակուց 400մլ/ | 33691423/582 | 84,000 |
| 8. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Միզանյութ 2x120 մլ/ | 33691423/584 | 222,600 |
| 9. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Միզաթթու 2x100 մլ/ | 33691423/585 | 90,000 |
| 10. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կրեատինին 2x120 մլ/ | 33691423/586 | 97,200 |
| 11. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Տրանսամինազա աստ 2x60 մլ/ | 33691423/587 | 133,200 |
| 12. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Տրանսամինազա ալտ 2x60 մլ/ | 33691423/588 | 133,200 |
| 15. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Խոլեսթերին 2x100 մլ/ | 33691423/591 | 108,000 |
| 18. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/ LDL - Լիպոպրոտեիդներ (բետա) 2X60մլ / | 33691423/594 | 564,480 |
| 23. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ֆոսֆոր 2x100 մլ/ | 33691423/599 | 66,000 |
| 25. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ շիճուկ նորմալ 6 x 5 մլ/ | 33691423/601 | 141,000 |
| 26. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ շիճուկ պաթոլոգիական 6 x 5 մլ/ | 33691423/602 | 141,000 |
| 27. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/ Սիֆիլիս RPR 100 թեսթ / | 33691423/603 | 470,400 |
| 28. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Սիֆիլիս TPHA 100թեսթ/ | 33691423/604 | 372,000 |
| 29. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/ Հեպատիտ B HBsAg 50թեսթ/ | 33691423/605 | 1,267,200 |
| 32. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Urin -10 մեզի անալիզի համար 100 թեսթ/ | 33691423/608 | 684,000 |
| 38. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրոլակտին 12x8/ | 33691423/609 | 285,600 |
| 39. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրոգեստերոն 12x8/ | 33691423/610 | 228,480 |
| 40. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն 12x8/ | 33691423/611 | 228,600 |
| 41. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Լյուտեինիզացնող հորմոն 12x8/ | 33691423/612 | 218,880 |
| 42. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն 12x8/ | 33691423/613 | 273,600 |
| 43. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Տեստոստերոն 12x8/ | 33691423/614 | 298,200 |
| 45. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/ Թիրօքսին T4 12X8/ | 33691423/616 | 498,000 |
| 46. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/ Տրիյոդթիրոնին T3 12X8/ | 33691423/617 | 495,000 |
| 47. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Թիրեոտրոպ հորմոն 12x8/ | 33691423/618 | 693,000 |
| 48. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կորտիզոլ 12x8/ | 33691423/619 | 189,000 |
| 51. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Հակակորիոզային հակամարմիններ (Ig G,A,M) 12x8/ | 33691423/622 | 477,000 |
| 52. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ /Շրջանառվող իմունոկոմպլեկսներ CIC C1Q IgG 12x8/ | 33691423/623 | 238,560 |
| 53. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Շրջանառվող իմունոկոմպլեկսներ CIC C3D IgG 12x8/ | 33691423/624 | 357,840 |
| 54. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/ՎիՉ-ինֆեկցիա HIV 12X8/ | 33691423/625 | 523,500 |
| 56. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/ Տոքսոպլազմա IgM 12X8/ | 33691423/627 | 310,320 |
| 57. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Տոքսոպլազմա IgG 12X8/ | 33691423/628 | 295,200 |
| 58. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Հերպես IgM 12X8/ | 33691423/629 | 558,000 |
| 59. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Հերպես IgG 12X8/ | 33691423/630 | 295,200 |
| 60. | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ցիտոմեգալովիրուս IgM 12X8/ | 33691423/631 | 310,320 |

| | | | |
|---|---|---|---|
| 61. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/** Ցիտոմեգալովիրուս IgG 12X8/ | 33691423/632 | 295,200 |
| 62. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/** Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgM 12X8/ | 33691423/633 | 691,200 |
| 63. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/** Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ IgG 12X8/ | 33691423/634 | 414,720 |
| 64. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/** Խլամիդիա IgA 12X8/ | 33691423/635 | 309,600 |
| 65. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/** Խլամիդիա IgG 12X8/ | 33691423/636 | 309,600 |
| 67. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/** APA IgG,IgM screen ELISA 96 տեստ / | 33691423/866 | 178,320 |
| 68. | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/** ACA screen ELISA 96 տեստ / | 33691423/867 | 167,760 |
| **Ընդամենը** | | | **13,815,780** |

***Վճարման ժամանակացույց*** *կսահմանվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

**Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«ՎԻՈԼԱ» ՍՊԸ**
**տնօրեն**

**Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ**

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-9/22-5 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ____________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    »«              » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      » «                 » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-9/22-5 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________ -ին կնքված N ______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________
ազգանուն, անուն

______________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________
ազգանուն, անուն

______________
ստորագրություն